

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ, 2013» վիճակագրական ժողովածուն ընդգրկում է հանրապետության 2009-2012թթ. արտաքին տնտեսական գործառնությունների, մասնավորապես, ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի վերաբերյալ տվյալները:

Վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է (հաշվեկշիռ), որում համակարգված տեսքով արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակաշրջանում (եռամսյակ, տարի) այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ: ՀՀ ռեզիդենտների¹ և ՀՀ ոչ ռեզիդենտների միջև տնտեսական բնույթի գործառնություններն իրականացվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների հոսքերի և ընթացիկ տրանսֆերտների տեսքով, իսկ ֆինանսական գործառնությունները՝ կապված ֆինանսական պահանջների և պարտավորությունների առաջացման հետ:

Վճարային հաշվեկշիռը կազմված է երկու հիմնական հաշիվներից՝ ընթացիկ և կապիտալի ու ֆինանսական: Ընթացիկ հաշվում գրանցվում են ապրանքների, ծառայությունների, եկամուտների և ընթացիկ տրանսֆերտների հետ կատարված գործառնությունները, իսկ կապիտալի և ֆինանսական հաշվում՝ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների շարժը, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտները: Ըստ մեթոդաբանության, ընթացիկ հաշվի մնացորդը բացարձակ մեծությամբ հակառակ նշանով պետք է հավասար լինի կապիտալի և ֆինանսական հաշվի մնացորդին, սակայն գործնականում միշտ առաջանում են տարբերություններ, ինչը միջազգային պրակտիկայում ընդունված է անվանել «սխալների և բացթողումների հոդված»:

Վճարային հաշվեկշիռը կառուցվում է հաշվապահական հաշվառման հետևյալ սկզբունքով. ամեն մի գործառնություն գրանցվում է կրկնակի՝ որևէ հաշվի կրեդիտում և մեկ այլ հաշվի դեբետում, ընդ որում ակտիվային հաշվի ավելացումը գրանցվում է դեբետում, իսկ նվազումը՝ կրեդիտում, պասիվային հաշվի ավելացումը գրանցվում է կրեդիտում, իսկ նվազումը՝ դեբետում: Կրկնակի գրանցման մեթոդի կիրառման պատճառն այն է, որ, որպես կանոն, տնտեսական գործառնություններն իրենցից ներկայացնում են տնտեսական արժեքների (ֆինանսական, նյութական) փոխանակում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ՀՀ վճարային հաշվեկշիռն առաջին անգամ կազմվել է 1993թ. համար: Սկզբնական շրջանում այն կազմվել է կրճատ տարբերակով, իսկ 1996թ. սկսած՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածներին համապատասխան (ՎՀՁ-5, BPM-5), ընդ որում 1999թ. նոր՝ ավելի ընդլայնված, տարբերակով²:

¹ ՀՀ ռեզիդենտ է համարվում ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, ցանկացած իրավաբանական անձ և այլ կազմակերպություն, որոնց մշտական գտնվելու վայրը (սովորաբար 1 տարուց ավել) կամ կենսական և տնտեսական շահերի կենտրոնը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը:

² Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) և ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) միջև 17.12.2010թ. ստորագրված երկկողմանի *փոխըմբռնման հուշագրի* դրույթների, 2011 թվականից սկսած ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի (արտաքին հաշիվների) վիճակագրության վարումը (վերջնական կառուցումը) ՀՀ ԱՎԾ-ից տեղափոխվել է ՀՀ ԿԲ: Համաձայն փոխըմբռնման հուշագրի, ՀՀ արտաքին հաշիվների որոշ հոդվածների վերաբերյալ (հիմնականում մասնավոր հատվածի գծով) տեղեկատվությունը հավաքագրվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից և ամփոփ տեսքով (ըստ վճարային հաշվեկշռի ստանդարտ հոդվածների) տրամադրվում է ՀՀ ԿԲ-ին: Միևնույն ժամանակ, ըստ փոխըմբռնման հուշագրի, ՀՀ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ վերջնական ցուցանիշները ՀՀ ԿԲ-ն տրամադրում է ՀՀ ԱՎԾ-ին: ՀՀ ԱՎԾ հրապարակումներում և տվյալների բազաներում զետեղելու համար:

ՀՀ վճարային հաշվեկշռի դինամիկան ցույց է տալիս, որ ընթացիկ հաշվի պակասուրդը հիմնականում պայմանավորված է ապրանքների գծով գոյացած բացասական հաշվեկշռով: Ֆինանսական հաշիվը բոլոր տարիների համար եղել է դրական:

Ժողովածուի նյութերի հիմքում ընկած են ՀՀ մաքսային վիճակագրության, կազմակերպություններում և տնային տնտեսություններում իրականացված վիճակագրական հետազոտությունների, բանկային և ֆինանսական համակարգերի տվյալները: Որոշ ցուցանիշներ (ապահովագրական վճարներ, ՀՀ ռեզիդենտ ճանապարհորդների ծախսերն արտասահմանում) ստացվել են փորձագիտական գնահատականների միջոցով, ինչն իրականացված է ԱՄՀ մեթոդաբանությամբ:

ՀՀ վճարային հաշվեկշռի հոդվածների տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրներն են՝

Ընթացիկ հաշիվ

- **ապրանքների գծով՝** արտաքին առևտրի վիճակագրությունը, որը ստացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից և կազմակերպություններից, ինչպես նաև հետազոտության միջոցով՝ տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքների վերաբերյալ տվյալներից: Ներմուծման վերաբերյալ տվյալները ներառում են նաև ՀՀ ռեզիդենտների կողմից ապրանքների տեսքով ստացված օտարերկրյա օգնությունը և նվերները,
- **ծառայությունների գծով՝** տարբեր տրանսպորտային, ապահովագրական, ճանապարհորդական, կապի, ֆինանսական և այլ ծառայությունների բնագավառներում իրականացվող հետազոտությունների տվյալները,
- **եկամուտների գծով՝** սեզոնային և այլ ծառայողների փոխանցումների վերաբերյալ տվյալները, հիմնականում հիմք ընդունելով ՀՀ ԱՎԾ կողմից տնային տնտեսություններում կատարված կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները, միաժամանակ, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարությունից և ՀՀ Կենտրոնական բանկից ստացված պետական պարտքի սպասարկման վերաբերյալ տվյալները: Այլ եկամուտների գծով տվյալները ստացվում են կազմակերպությունների հետազոտություններից,
- **ընթացիկ տրանսֆերտների գծով՝** մարդասիրական օգնությամբ ստացված բեռների և դրամաշնորհների մասին տվյալները, ստացված ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ ֆինանսների նախարարությունից և միջազգային կազմակերպություններից, ինչպես նաև տնային տնտեսություններում կատարված կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներից:

Ֆինանսական հաշվի գծով տվյալները հավաքագրվում են հիմնականում ՀՀ ֆինանսների նախարարությունից, ՀՀ կենտրոնական բանկից և օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններից:

Միջազգային ներդրումային դիրքը (ՄՆԴ) վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում է երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը որևէ ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: Միաժամանակ, հաշվետվությունում արտացոլվում են այն բոլոր փոփոխությունները, որոնք կատարվել են

Տեղեկատվությունը, MS-Excel ձևաչափով, գեներվում է նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայքէջի «Վիճակագրական տվյալների բազաներում» հետևյալ հասցեով՝ <http://www.armstat.am/am/?nid=246> :

ուսումնասիրվող ժամանակահատվածում (2009-2012թթ.)՝ գործառնությունների, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների արդյունքում:

ՄՆԴ-ն և վճարային հաշվեկշիռը համատեղ նկարագրում են երկրի տնտեսության ու արտաքին աշխարհի միջև տնտեսական հարաբերությունները և տեղեկատվական հիմք կարող են հանդիսանալ երկրի ներքին ու արտաքին տնտեսական քաղաքականությունների մշակման գործընթացներում: Արտաքին տնտեսական հարաբերությունները նկարագրող տեղեկատվությունն օգտագործվում է տարբեր տեսակի արտաքին ու ներքին անհաշվեկշռվածությունների պատճառները բացահայտելու նպատակով: Նշված հանգամանքներով պայմանավորված, ՄՆԴ-ի և վճարային հաշվեկշռի վերլուծությունը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսական քաղաքականության մշակման համար:

ՄՆԴ-ն սերտորեն կապված է վճարային հաշվեկշռի հետ: Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվում գրանցվում են բոլոր գործառնությունները՝ կապված արտաքին ակտիվների և պարտավորությունների հետ: Բնականաբար, այդ գործառնություններն իրենց ազդեցությունն են ունենում ՄՆԴ-ում արտացոլված արտաքին ակտիվների ու պարտավորությունների պաշարների վրա: Միաժամանակ, կան նաև այլ գործոններ (գների, փոխարժեքի փոփոխություններ), որոնք ժամանակի ընթացքում հանգեցնում են ակտիվների և պարտավորությունների արժեքի փոփոխության: Այդ փոփոխությունները նույնպես արտացոլվում են ՄՆԴ-ում:

ՄՆԴ-ն կազմված է երկու մասից՝ ակտիվներից և պարտավորություններից: Ակտիվներն իրենց հերթին բաժանվում են 4 խմբի.

- ուղղակի ներդրումներ,
- պորտֆելային ներդրումներ,
- այլ ներդրումներ,
- պահուստային ակտիվներ:

Պարտավորությունները բաղկացած են ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումներից:

Ուղղակի ներդրումները բաղկացած են երկու ենթախմբերից՝

- ա) բաժնետիրական կապիտալից և վերաներդրված շահույթից,
- բ) այլ կապիտալից (ներֆիրմային գործառնություններ):

Պորտֆելային ներդրումները դասակարգված են ըստ ֆինանսական գործիքների (բաժնետոմսեր, պարտքային պարտավորություններ) և տնտեսության հատվածների:

Այլ ներդրումները նույնպես դասակարգված են ըստ գործիքների և ըստ տնտեսության հատվածների:

Պահուստային ակտիվները բաղկացած են դրամական ոսկուց, փոխառության հատուկ իրավունքից (SDR), Արժույթի միջազգային հիմնադրամում ունեցած դիրքից և արտարժույթային ակտիվներից:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տարբերությունը ցույց է տալիս տնտեսության զուտ միջազգային ներդրումային դիրքը: Դրական զուտ միջազգային ներդրումային դիրքը նշանակում է, որ սովյալ երկիրը հանդիսանում է վարկատու, իսկ բացասական դիրքի դեպքում՝ վարկառու: Չուտ միջազգային ներդրումային դիրքը բնութագրում է նաև երկրի ազգային հարստությունը: Այն կարելի է գնահատել գումարելով զուտ միջազգային ներդրումային դիրքը և երկրի ոչ ֆինանսական ակտիվները (նյութական՝ հիմնական միջոցներ, շրջանառու միջոցներ, բնական հարստություններ և այլն, ոչ նյութական՝ արտոնագրեր, ծրագրային ապահովում և այլն):

ՄՆԴ-ի փոփոխությունների հողվածը կազմված է 4 հիմնական մասից.

1. փոփոխություններ գործառնությունների հաշվին, որոնք կատարվել են հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական գործառնությունների իրականացման ընթացքում,

2. փոփոխություններ գների հաշվին, որոնք առաջացել են ֆինանսական ակտիվների գների փոփոխությունների հաշվին,

3. փոփոխություններ փոխարժեքի հաշվին, որոնք առաջացել են փոխարժեքի արժեքավորման կամ արժեզրկման հաշվին,

4. այլ փոփոխություններ, որոնք առաջանում են փոխառության հատուկ իրավունքով միջոցների բաշխման, ոսկու մոնետարիզացման և դեմոնետարիզացման, ներդրումների վերադասակարգման, ներդրողի կողմից ներդրման միակողմանի դուրս գրման դեպքերում և այլն:

Սույն ժողովածուն ներառում է նաև Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի ցուցանիշների դինամիկան 2009-2012թթ. վերջի դրությամբ:

Համախառն արտաքին պարտքը ժամանակաշրջանի ցանկացած պահին փաստացի ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների չվճարված գումարն է, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում ժամանակի որևէ պահին և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:

Արտաքին պարտքը որպես կանոն առաջանում է պայմանագրային հարաբերությունների հիման վրա, ըստ որի մեկ կառուցվածքային միավորը (դեբիտորը) պարտավորություններ է ստանձնում մեկ այլ կառուցվածքային միավորի (կրեդիտորի) հանդեպ վերադարձնել հիմնական գումարը տոկոսներով կամ առանց տոկոսների կամ էլ վճարել տոկոսներն առանց վերադարձնելու հիմնական գումարը:

Արտաքին պարտքի գործիքների թվին են դասվում պարտքի արժեթղթերը, վարկերը, առևտրային վարկը, կանխիկ դրամական միջոցները և ավանդները, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող միջֆիրմային շարժը (վարկեր, առևտրային վարկեր, փոխառություններ):

Պարտքի գործիքներ չեն համարվում ֆինանսական գործիքների ֆինանսական ածանցյալները, կապիտալի մասնակցության արժեթղթերը, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների տարր հանդիսացող բաժնետիրական կապիտալը և վերաներդրված շահույթը (եկամուտը):

Արտաքին պարտքը հաշվարկվում է ըստ տնտեսության հատվածների, որոնք համաձայն արտաքին պարտքի մեթոդաբանության, դասակարգվում են (1) պետական կառավարման մարմիններ, (2) դրամավարկային կարգավորման մարմիններ, (3) առևտրային բանկեր և (4) այլ հատվածներ (ուղղակի ներդրումների տարր հանդիսացող միջֆիրմային շարժերը բերվում են առանձին՝ 5-րդ բաժնով, առանց տնտեսության հատվածների բաժանման): Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի երաշխիքներով մասնավոր հատվածի կազմակերպությունների ստացված վարկերն ըստ արտաքին պարտքի մեթոդաբանության ներառված են տնտեսության «այլ հատվածի» պարտքի ցուցանիշում:

Արտաքին պարտքի ցուցանիշը ներառում է ոչ միայն հիմնական գումարը, այլ նաև ժամանակահատվածի վերջի դրությամբ հաշվարկված, բայց դեռևս չվճարված տոկոսավճարները:

Քանի որ աղյուսակներում տվյալներն արտացոլված են ստորակետից հետո երկու նիշով, հնարավոր է, որ հանրագումարներում լինեն 0.01-0.03 հարյուրերորդականների անճշտություններ, որոնք էլ թվերի կլորացման արդյունք են:

Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի ցուցանիշները հաշվարկված են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրատարակված վճարային հաշվեկշռի ձեռնարկի հինգերորդ հրատարակության (1993թ.) և արտաքին պարտքի վիճակագրության ուղեցույցի (2003թ.) մեթոդաբանությանը համապատասխան:

INTRODUCTION

«The Foreign Accounts of the Republic of Armenia for 2013» Statistical handbook includes the data on external economic transactions, particularly, on Balance of Payments of the Republic of Armenia, International investment position and External debt during 2009-2012.

Balance of payments (BOP) is a statistical report, in which the overall data concerning the foreign economic operations of the Republic of Armenia with the other countries and international organizations are represented in systematic form for reporting period (quarter, year). The economic operations between residents¹ and non-residents of RA are implemented in the form of goods and services, income flows, current transfers and financial operations, in relation to the financial needs and liabilities.

BOP consists of two main accounts: current account and capital and financial account. The operations related to the goods, services, income and current transfers are registered in the current account, whereas in the capital and financial account the flow of financial assets and liabilities, as well as capital transfers are registered. According to the methodology, the rest of current account in absolute terms should be equal to the rest of capital and financial account, however, in reality discrepancies are always unavoidable. In international practice this is considered to be called the article of "net errors and omissions".

BOP is built by the following principle of accountancy: each operation is double entered to any credit account and in another other debit account and the increase of asset account is registered in debit, whereas the decrease – in credit; the increase of passive account is registered in credit, whereas the decrease – in debit. The application of the method of double entry is explained by the fact that as a rule the economic operations are the exchange of economic values /in financial and material terms/.

For the first time in the Republic balance of payments was compiled by the National Statistical Service for 1993. At first it was compiled in brief version, while since 1996 in compliance with generalized articles developed by the International Monetary Fund (IMF, BPM-5) and for 1999 in new enlarged version².

The dynamics of balance of payments of the Republic of Armenia shows that the deficit of current account is mostly determined by the negative balance on goods. The financial account in all years was positive.

The handbook is based on the statistical data of custom statistics, banking and financial systems of RA, statistical surveys conducted in organizations and households. Some indicators (insurance payments, expenditures of RA resident travelers abroad) were received through estimations, which are implemented by the methodology of International Monetary Fund (IMF).

The main sources of BOP data collection are:

On Current Account

- on **commodity article** – the foreign trade statistics received data from the State Customs Committee under the RA Government and from enterprises, as well as data on commodities received through the surveys conducted in the transport stations. The data on import also include foreign assistance and gifts in kind, received by the residents of Armenia;
- on **services article** – data on surveys implemented in the fields of different transport, insurance, travel, communication, financial and other services.

¹ The resident of RA can be considered any natural person, household, economic enterprise, legal entity (enterprise) or any other organization acting on the territory of RA, the permanent place of being of which (usually not less than 1 year) or sphere of economic activity is the Republic of Armenia (for natural persons the place of residence).

² Since 2011 balance final compilation of payments, international investment position and external debt statistics of RA (foreign accounts) conduction has been transferred from National Statistical Services of RA (NSS RA) to the Central Bank of RA (CB RA), according to the provisions on bilateral **memorandum of understanding** between NSS RA and CB RA signed in 17.12.2010. According to the mentioned memorandum of understanding the data on some items of foreign assets (mainly in the private sector) are collected by the NSS RA and in summary form (based on standard items of balance of payments) will be provided to the CB RA. At the same time final indicators on balance of payments, international investment position and gross external debt of RA, according to the memorandum of understanding, the CB RA provides to NSS RA to be disseminated through NSS RA publications and internet databases. The information in MS-Excel format is also available in database on the website of NSS RA by the following address: <http://www.armstat.am/am/?nid=246>:

- on **income articles** – data on transfers of seasonal and other types of workers, mainly based on the results on integrated living conditions surveys conducted by the National Statistical Service of RA (NSS RA) in households. At the same time, the data on government debt service received from the Ministry of Finance of RA and the Central Bank of RA. Data on other types of income are received from the surveys of organizations;
- on **current transfers article** – data on cargoes and grants acquired as humanitarian aid, received by the State Customs Committee under the RA Government, Ministry of Finance of RA and international organizations, as well as results of the on integrated living conditions survey conducted in the households.

Data on **financial account** are mainly collected from the Ministry of Finance of RA, the Central Bank of RA and organizations having foreign investments.

This publication includes time series of indicators on International Investment and External Debt Positions of the Republic of Armenia at the end of year¹.

The International Investment Position (IIP) is a statistical report reflecting the financial assets and liabilities level of country at the beginning and end of a period. At the same time the report represents all the changes occurred due to financial transactions, prices, exchange rate and other adjustments in the reference (2009-2012) period.

IIP and BOP jointly describe the economic relations between the economy of country and external world and may be served as an informational basis for the processes of internal and external economic policy making of the country. The information describing external economic relations is used to reveal the reasons of different external and internal imbalances. Stipulated by the mentioned circumstances, the analysis of IIP and BOP plays an important role for the country economic policy making.

IIP is closely linked to the BOP. All transactions connected with foreign assets and liabilities are recorded in the BOP financial account. Certainly, these transactions impact upon stocks of foreign assets and liabilities reflected in IIP. At the same time there are also other factors (price changes, exchange rate changes), which bring to changes in value of assets and liabilities over the period. These changes are also reflected in IIP.

IIP consists of 2 parts: assets and liabilities. And assets are divided into 4 groups:

- Direct investments,
- Portfolio investments,
- Other investments,
- Reserve assets.

The liabilities consist of direct, portfolio and other investments.

Direct investments consist of two subgroups:

- a/ Equity capital and reinvested earnings,
- b/ other capital (inside-firm transactions).

The portfolio investments are classified by financial instruments (equities, debt liabilities) and economy sectors.

Other investments are also classified by instruments and economy sectors.

Reserve assets comprise monetary gold, special drawing rights (SDRs), position in the IMF, and foreign exchange assets.

The difference between financial assets and liabilities shows the net international investment position of economy. Net positive international investment position means, that the given country is a creditor, while in case of negative position – a debtor. Net international investment position also characterizes the national wealth of country. It can be estimated by adding net international investment position and non-financial assets of country (material: fixed assets, current assets, national wealth and etc., non-material: patents, software, etc.).

IIP changes item consists of 4 main parts:

1. Transactions changes, which occur during the financial transactions in the reporting period,
2. Price changes, which occur due to changes in prices of financial assets,
3. Exchange rate changes, which occur due to valuation and devaluation of exchange rate,

4. Other adjustments, which occur due to distribution of Special Drawing Rights (SDRs) means, monetarization and demonetization of gold, investment reclassification, in cases of unilateral withdrawing of investment by investor and etc.

The given handbook includes time series of indicators on External debt of the Republic of Armenia at the end of 2009-2012 as well.

Gross External debt, at any given time, is the amount of those actual current, and not contingent, liabilities that require payments of principal and (or) interest by the debtor at some points in the future and that are owed to nonresidents by residents.

External dept as a rule arises based on the contract relations, according to which one structural unit /debtor/ takes liabilities with respect to one other structural unit /creditor/ to repay the main amount by interests or without interests or to pay interests without repaying of the main amount.

Debt instruments. external debt instruments are debt securities, loans, trade loan, cash financial means, and deposits, as well as an inter-firm movement (loans, trade loans, borrowings) as a component of foreign direct investments.

Financial derivatives of financial tools, securities of capital share, as well as equity capital and reinvested profit (income) as a component of foreign direct investments are not considered debt tools.

External debt is calculated by economy sectors that according to the external debt methodology are classified 1) state government bodies, 2) money-credit regulation bodies and 4) other sector (inter-firm movements as a component of direct investments are represented separately by 5-th section without division of economy sectors). Moreover, by guaranties of the RA Government and RA Central Bank, loans received by organizations of the private sector have been included in the debt indicator of economy “other sector” according to the external debt methodology.

External debt indicator includes not only a main amount, but also calculated as of the end of period, but not paid percentage payments.

Indicators of International Investment Position and External Debt of the Republic of Armenia have been calculated according to the methodology of BOP manual fifth edition (1993) and External Debt Statistics (2003) Guidelines published by IMF.

Since the data in tables are presented in hundredth fractions, discrepancies by 0.01 – 0.03 are possible in the totals. They are results of the data round-off.